ՈՐՈՇՈՒՄ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 7 հուլիսի 2008թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմը

Նախագահությամբ՝ Ռ. Պապայանի

Անդամակցությամբ՝ Հ. Նազարյանի

Հ. Դանիելյանի

Քննության առնելով ՀՀ քաղաքացի Խաչատուր Շահինյանի դիմումի ընդունելիության հարցը

ՊԱՐԶԵՑ

Քաղ. Խաչատուր Շահինյանը դիմել է Սահմանադրական դատարան, վիճարկելով ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231 հոդվածի 2-րդ մասի, 233 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 234 հոդվածի սահմանադրականությունը:

2-րդ դատական կազմը գտավ, որ ներկայացված դիմումը ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234 հոդվածի առումով ենթակա է մերժման «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 3-րդ կետի և ՀՀ Սահմանադրական դատարանի Կանոնակարգի 25 հոդվածի 1-ին կետի պահանջներից ելնելով, քանի որ դրա վերաբերյալ առկա է Սահմանադրական դատարանի կողմից կայացված ՍԴՈ-690 որոշումը:

2-րդ դատական կազմը նաև գտավ, որ դիմումը 231 հոդվածի 2-րդ մասի և 233 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի առումով համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 6 կետի, Սահմանադրական դատարանի մասին օրենքի 27, 28 հոդվածների եւ 69 հոդվածի 1, 2, 4, 5 կետերի, ինչպես նաև ՀՀ Սահմանադրական դատարանի Կանոնակարգի պահանջներին: Պահպանվել է Սահմանադրական դատարան դիմելու՝ օրենքով նախատեսված ժամկետը:

Դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները և գտնում է, որ իր նկատմամբ կիրառված օրենքների դրույթները հակասում են Սահմանադրությանը:

Խ. Շահինյանը միջնորդել է իրեն ազատել պետտուրքի վճարումից, որը բավարարման ենթակա է, քանի որ գործազուրկ և եկամտի այլ աղբյուր չունի:

Ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին օրենքի 69 հոդվածի 6 կետով, Սահմանադրական դատարանի 2-րդ կազմը

ՈՐՈՇԵՑ

1. Քաղ. Խաչատուր Շահինյանի դիմումը՝ ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234 հոդվածի սահմանադրականությունը վիճարկելու մասին, մերժել՝ տրամադրելով նրան ՍԴՈ-690 որոշումը:

2. Քաղ. Խաչատուր Շահինյանի դիմումը՝ ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231 հոդվածի 2-րդ մասի և 233 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի սահմանադրականությունը վիճարկելու մասին, ընդունել քննության, կազմել գործ, որով պատասխանող ճանաչել ՀՀ Ազգային Ժողովին:

3. Խ. Շահինյանին ազատել պետտուրքի վճարումից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՐՈՒԹՅՈՒՆ